ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/85

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի կողմից 02.10.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/85 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն 02.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից արևային ջրատաքացուցիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 5 հավելվածի՝ գնային առաջարկի օրինակելի ձևի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, վերջինիս հարկազատման նպատակով տրամադրվում է համապատասխան տեղեկանք:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն, «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն և «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.09.2018թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

	Մասնակիցների անվանումը	Գին առանց ԱԱՀ	Գին ներառյալ ԱԱՀ
1	«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ	5 200 000	5 200 000
2	«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ	4 399 926	5 297 911
3	«Օպտիմում Էներջի» ՍՊԸ	4 394 000	5 272 800

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն ներկայացված բողոքով նշել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանվել էր, որ գնման առարկա հանդիսացող ապրանքը ազատված է ԱԱՀ-ից, հետևաբար «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն գնային առաջարկը ներկայացրել էր առանց ԱԱՀ-ի տողը լրացնելու:

Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող՝«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ին, իսկ 3-րդ տեղ՝ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ին:

Հանձնաժողովի 27.09.2018թ. թիվ 3 արձանագրության 6.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 6.3 կետի համաձայն՝ հաստատվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել 27.09.2018թ.-ից մինչև 02.10.2018թ.-ը:

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի կողմից բողոքի իրավական հիմք նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական հիմքերը, «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն հայտնել է, որ Հանձնաժողովը, բավարար գնահատելով «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի և «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի հայտերը, փաստացի հակասել է ինքն իրեն, քանի որ Հրավերով սահմանել է, որ գնման առարկան ազատված է ԱԱՀ-ից, իսկ այնուհետև, առանց ԱԱՀ-ի գնահատելով վերջիններիս հայտերը, անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծել գնման ընթացակարգի մասնակիցների համար: Հակառակ դեպքում Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի հայտը կլիներ նվազագույնը:

Բացի այդ, Հանձնաժողովը թույլ է տվել ևս մեկ խախտում, այն է՝ «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի և «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի գնային առաջարկները գերազանցել են հրավերով նախատեսված նախահաշվային գինը, քանի որ նույն

հանձնաժողովի 19.09.2018թ. արձանագրության մեջ նշվել է, որ գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 5 200 000 ՀՀ դրամ:

Երկու դեպքում էլ Հանձնաժողովի գործողությունները ոչ իրավաչափ են և հակասում են միմյանց, քանի որ կամ պետք է ի սկզբանե մերժվեր գնային առաջարկում ԱԱՀ-ն գրված մասնակիցների հայտերը, կամ՝ արձանագրել նախահաշվային գնի գերազանցում և մերժել, քանի որ առկա է եղել գնային առաջարկ, որը չի գերազանցել նախահաշվային գինը: Այստեղ բանակցություններ կազմակերպելու իրավական հիմք չի կարող լինել, քանի որ եղել է նվազագույն գնային առաջարկ, որը չի գերազանցել նախահաշվային գինը:

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն գտնում է, որ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից արևային ջրատաքացուցիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՓՄՁ-ՋԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված պահանջները:

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն ներկայացված բողոքով խնդրել է պարտավորեցնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կարիքների համար արևային ջրատաքացուցիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՓՄՁ-ՋԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Հանձնաժողովի՝

1. 19.09.2018թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու, «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ին երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները,

2. 27.09.2018թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված բոլոր որոշումները,

3. Պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.10.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>«Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

«Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն 08.10.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.10.2018թ. միջանկյալ որոշմամբ ԳԲԽ-ԱՄ-2018/85 բողոքով ներգրավվել է երրորդ կողմ:

«Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, ուստի մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումը պետք է իրականացվեր առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման, անկախ նրանից մասնակցի կողմից ԱԱՀ դաշտը լրացված է, թե՝ ոչ:

3. **<u>«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.10.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, քանի որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին: Ինչ վերաբերվում է ԱԱՀ դաշտը լրացված լինելուն, ապա այն տվյալ դեպքում որևէ նշանակություն չունի, քանի որ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, ավելին՝ հրավերի հավելված 7-ով սահմանվել է, որ պայմանագրի

գինը չի ներառում ԱԱՀ, ուստի ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35 ծածկագրով ընթացակարգի հաղթողին որոշելիս հիմք է ընդունվել առանց ԱԱՀ գինը:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իր կարիքների համար արևային ջրատաքացուցիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն, «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն և «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի հրավերի հավելված 5-ով նախատեսվել է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

Հավելված 5
«ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն
առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Արևային ջրատաքացուցիչ			

ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, վերջինիս հարկազատման նպատակով տրամադրվում է համապատասխան տեղեկանք:

4. Ընթացակարգի հրավերի հավելված 7-ի՝ Պայմանագրի նախագծի, 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ ***Պայմանագրի գինը*** կազմում է _____ ՀՀ դրամ, ***առանց ԱԱՀ***: ***ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից և վերջինիս հարկազատման նպատակով տրամադրվում է համապատասխան տեղեկանք:***

5. «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Արևային ջրատաքացուցիչ	4 394 000 (չորս միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար)	878 800 (ութ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր)	5 272 800 (հինգ միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր)

6. «Սոլար Էներջի սիստեմ սոլութիոնս» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	**Արևային ջրատաքացուցիչ**	4 399 926 000 (չորս միլիոն երեք հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քսանվեց)	879 985 (ութ հարյուր յոթանասունին ը հազար ինը հարյուր ութսունիինգ)	5 279 911 (հինգ միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր տասնմեկ)

7. «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	**Արևային ջրատաքացուցիչ**	5 200 000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար)	0 (զրո)	5 200 000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար)տասնմեկ)

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն, իսկ 27.09.2018թ. թիվ 3 արձանագրության 6.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի 02.10.2018թ. բողոքը, «ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ ***նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:***

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, <u>մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:***

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իր կարիքների համար արևային ջրատաքացուցիչների ձեռքբերման

նպատակով հայտարարվել է «ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի հավելված 5-ով նախատեսվել է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

Հավելված 5
«ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Արևային ջրատաքացուցիչ			

ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, վերջինիս հարկազատման նպատակով տրամադրվում է համապատասխան տեղեկանք:

Ընթացակարգի հրավերի հավելված 7-ի՝ Պայմանագրի նախագծի, 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ ***Պայմանագրի գինը*** կազմում է _____ ՀՀ դրամ, ***առանց ԱԱՀ***: ***ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից և վերջինիս հարկազատման նպատակով տրամադրվում է համապատասխան տեղեկանք:***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն, «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն և «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Արևային ջրատաքացուցիչ	4 394 000 (չորս միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար)	878 800 (ութ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր)	5 272 800 (հինգ միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր)

«Սոլար Էներջի սիստեմ սոլութիոնս» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Արևային ջրատաքացուցիչ	4 399 926 000 (չորս միլիոն երեք հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քսանվեց)	879 985 (ութ հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր ութսունհինգ)	5 279 911 (հինգ միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր տասնմեկ)

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	**Արևային ջրատաքացուցիչ**	5 200 000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար)	0 (զրո)	5 200 000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար)տասնմեկ)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն, իսկ 27.09.2018թ. թիվ 3 արձանագրությամբ նաև ընտրված մասնակից՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Այսպիսով՝ «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն և «Սոլար Էներջի սիստեմ սոլութիոնս» ՍՊԸ-ն գնային առաջարկներում առանձին տողով նախատեսել են նաև պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը, այն պայմաններում, երբ Ընթացակարգի հրավերի հավելված 5-ով՝ գնային առաջարկով, սահմանվել է, որ ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, վերջինիս հարկազատման նպատակով տրամադրվում է համապատասխան տեղեկանք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: ***<u>Միևնույն ժամանակ նույն կետի համաձայն՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի և «Սոլար Էներջի սիստեմ սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկներում առանձին տողով ԱԱՀ-ի գումար նախատեսելը՝ տվյալ գործարքի գծով ԱԱՀ վճարելու պարտավորության բացակայության պայմաններում, չի կարող դիտարկվել որպես վերջիններիս հայտերը մերժելու հիմք, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց ԱԱՀ-ի հարկի գումարի հաշվարկման, այն է՝ արժեքով (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը), ինչը և իրականացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:***

Միաժամանակ՝ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված գնային առաջարկների արժեքով (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) գնահատման արդյունքում «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, քանի որ վերջինիս ներկայացրած գնային առաջարկի մեջ նշված արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) նվազագույնն է եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի և «Սոլար Էներջի սիստեմ սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկի մեջ ԱԱՀ-ի գումարի նախատեսումը չի հանգեցնում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սկզբունքների խախտման և անհավասար պայմաններ չի ստեղծում այլ

մասնակիցների համար, ուստի գտնում եմ, որ սույն մասով բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի և «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի գնային առաջարկները գերազանցում են հրավերով նախատեսված նախահաշվային գինը, քանի որ նույն հանձնաժողովի 19.09.2018թ. արձանագրության մեջ նշվել է, որ գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 5 200 000 ՀՀ դրամ, ուստի պետք է արձանագրվեր նախահաշվային գնի գերազանցում և մերժվեր հայտերը, քանի որ առկա է եղել գնային առաջարկ, որը չի գերազանցել նախահաշվային գինը, ապա արձանագրում եմ հետևյալը.

ԳԲԽ-ԱՄ-2018/85 բողոքի քննության նպատակով 08.10.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի հավելված 7-ով սահմանվել է, որ պայմանագրի գինը չի ներառում ԱԱՀ, ուստի «ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրով ընթացակարգի հաղթողին որոշելիս հիմք է ընդունվել առանց ԱԱՀ գինը:

Ընթացակարգի հրավերի հավելված 7-ի՝ Պայմանագրի նախագծի, 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ ***Պայմանագրի գինը չի ներառում ԱԱՀ***, ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով ***սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից***, վերջինիս հարկազատման նպատակով տրամադրվում է համապատասխան տեղեկանք:

Այսպիսով քանի, որ պայմանագրի գինը չի ներառում ԱԱՀ, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՊՁԲ-2018/35» ծածկագրով ընթացակարգի հաղթողին որոշելիս հիմք ընդունելով առանց ԱԱՀ գինը, գործել է իրավաչափ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի գնային առաջարկի արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) ***առանց ԱԱՀ կազմում է 4 394 000 ՀՀ դրամ***, իսկ «Սոլար Էներջի սիստեմ սոլութիոնս» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ ***4 399 926 000 ՀՀ դրամ***, որոնք չեն գերազանցում գնման առարկայի նախահաշվային գինը, որը կազմում է 5 200 000 ՀՀ դրամ:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի բողոքը սույն մասով ևս անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի կողմից 02.10.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ